




ԵՐԿՈՒՇԱԲԱԲԱԲԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍԻՍ Կը հրատարակուի ի կ. Պոլիս, ամէն ամսոյ 1ին և 15ին:
Հասցէ՝ կ. Պոլիս, Ղալաթիա Նորտուռնիկան խան:
Ձեռքէ կը ծախուի հատը 40 փարսյ:



Բաժանորդագին
Պոլիս, տարեկան
Կաւառները,
Ծնար Երկիրը,

մէկ մէճիտ:
մէկ քառորդ ոսկի:
վեց ֆրանք:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 15 ՅՈՒՆՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—Մենք Հայ ենք, եղբայր, մեզ ի՞նչ փոյթ թէ ի՞նչ կ'ընէ Ռուս կառավարութիւնը Ռուս եկեղեցիին, Ռուս եկեղեցականութեան: Մեր ի՞նչ հոգն է թէ Ռուս կառավարութիւնը ի՞նչ չափս կը վարուի Զարին հպատակ ուրիշ այլադաւան ժողովուրդներու հետ: Մենք Հայ ենք, մենք մեր գործը տեսնենք, մերժենք Պալաթէն, լմնցաւ դնաց:

Անվրէպ այս պատասխանը կուտան անոնք որոնք էրտուի թէ՛ մեծագոյ թայագանչութիւններով, ինչպէս Ռուս իշխանացոյց ապառնալիքներով չէ որ հրնարաւոր պիտի ըլլայ իրականապէս պաշտպանել Հայոց եկեղեցւոյ, Հայոց ազգութեան կենսական շահերը, այլ պէտք է լաւ ճանչնալ Ռուս կառավարութեան ընդհանուր կրօնական քաղաքականութիւնը և ըստ այնմ խորհիլ ու գործել: Եթէ այդ քաղաքականութեան լաւ ծանօթ ըլլանք պիտի համոզուինք որ մեր խորհելու և գործելու եղանակը փոփոխելու հարկ կայ:

Քառորդ դար մըն է որ Պոլսի Հայերն, յանուն ընդհանուր Հայութեան կատաղի պատերազմ կը մընն Պալաթէնի դէմ, եւ սակայն ի՞նչ շահեցանք: Թէ ի՞նչ շահեցանք այդ յայտնի չէ, բայց թէ ի՞նչ կորսնցուցինք ընտրելու մեր անհեռատեսութեան այդ ակներեւ կը տեսնուի:

Եթէ պիտի կուտինք միայն սկզբունքներ պաշտպանելու համար, և ոչ թէ օգուտ մը տեսնելու նպատակաւ, կրնանք աւանդ ո՛ր և է անպատեհութեան շարունակել մեր քսան և հինգամեայ ուղղութիւնը. իսկ եթէ կ'ուզենք ձեռք բերել դրական օգուտներ, հարկ է մեզ փոխել մեր թէ՛ խորհելու և թէ՛ գործելու եղանակը:

Ի՞նչ կ'ընենք քառորդ դարէ մը ի վեր: Կը պաշտպանուինք Պալաթէնի ջնջումը, ինչպէ՞ս շատ շատ անոր բարեփոխումը. այլ հոկայն օր մը մենք մեզի հարցուցի՞նք թէ Ռուս կառավարութեան ընդհանուր քաղաքականութիւնը կը ներէ՞ որ Պալաթէնին բոլորովին մեր ուղածին պէս բարեփոխուի: Եթէ արդարեւ համոզուած ենք որ մեր արդար պահանջումներու գոհացում կարելի է յուսալ Ռուս կառավարութենէն պահանջներ Պալաթէնիայի վերաբնութիւնը կամ ջնջումը, իսկ եթէ ներելի չէ

տածել այդ յոյս, ի՞նչ բնենք. չորունակե՞նք ապարդիւն կերպով բողոքել և ըստպատել թէ մեր նպատակին հասնելու ուրիշ եղանակ խորհինք:

Այդ յոյս կարենալ տածելու համար տածելու մասին համազուգում համար միակ միջոցն զոր ունինք ուրիշ ոչ այլ ինչ կրոնայ ըլլալ բայց եթէ ուսումնասիրութիւն մը Ռուսիոյ ընդհանուր կրօնական քաղաքականութեան որմէ պիտի կարենանք միանգամայն հետեւցնել թէ Պալատէնիան արդեօք մասնաւորապէս Հայոց համար հաստատուած է, թէ Հայոց եկեղեցին ալ կ'ենթարկուի համայն Ռուսիոյ մէջ տիրապետող ընդհանուր կրօնական քաղաքականութեան:

Այդ ուսումնասիրութիւն կը բաժնենք երկու մասի

Ա. Ռուս ինքնակալութեան — Շեքսպիր — քաղաքականութիւնը հանդէպ կրօնքի, նոյն իսկ Ռուս — շեքսպիր կրօնքի:

Բ. Ռուս ինքնակալութեան և Ռուս օրթոքսոս ժողովրդին քաղաքականութիւնը Ռուսիոյ այլադատան կրօնքներու նկատմամբ:

Ա.

Ռուս ազգային եկեղեցին Ռուս ինքնակալին — Շեքսպիրին — հպատակն է: Անհանգուրժելի է ինքնակալութեան տեսնել Պետութեան սահմաններուն մէջ ուրիշ իշխանութիւն մը որ, կրօնքի քօղին ներքեւ սքօղում, մրցակից հանդիսանայ միահեծան կայսեր իշխանութեան:

Շնչելով ինքնակալական միջոցառումը, ապրելով միահեծան Չարին անսահման իշխանութեան շուքին ներքեւ, Ռուս եկեղեցին այն չափով կը վայելէ ազատութիւն ինչ չափով որ ժողովրդին շնորհւած է քաղաքային ազատութիւն: Եւ երբ գիտենք թէ այդ Միապետութեան մէջ ո՛չ մի ազատութեան նշոյլը նշմարելի է, գիւրաւ կրնանք ենթադրել թէ ի՞նչ է Ազգային եկեղեցիի վայելած ազատութեան չափը:

Սակայն եղաւ աստէն մը որ Ռուս եկեղեցին իր իրաւունքները ջերմապէս պաշտպանելու փորձն րբաւ. Չարին դէժ կանգնեցաւ Պատրիարքը. մրցումն սկսաւ եր-

կու իշխանութիւններու միջեւ, հոգեւորին և մարմնաւորին:

Ներքին խառնակութիւններու միջոցին, քաղաքական իշխանութեան տկարանալու պահուն, 1589ին, Ռուս եկեղեցին սկսաւ ստանալ զօրեղ կաղմակերպութիւն մը, և ունեցաւ ի Մոսկովա իր Պատրիարքութիւնը որ կ'ազատէր Ռուսիան Կ. Պոլսի օրթօտօքսութեան Տիեզերական Պատրիարքի լուծէն և Ռուս եկեղեցին կ'ստարեւապէս ազգային եկեղեցի մը կ'ընէր:

Այդ զօրաւոր եկեղեցին սկսաւ ահազել ինքնակալ կայսրութեան: Ռուս եկեղեցին ունեցաւ 1660 թուականին մի Պատրիարք որ պարզեց եկեղեցւոյ անկախութիւնը քրօշակը. այդ քրօշակը Մեծն Պետրոս յետոյ պատառ պատառ րբաւ:

Այդ Պատրիարքն էր Նիկին որ ուզեց Արեւելեան եկեղեցւոյ փոխանցել Արեւմտեան եկեղեցւոյ աւանդութիւններն: Նիկին կը հռչակէր թէ՛ հաւասարապէս Աստուծոյ կը բոլորին երկու իշխանութիւններն ալ՝ Հոգեւորն ու Մարմնաւորը. կը մերժէր Պետութեան գերազանցութիւնը եկեղեցւոյ վրայ, կը բողոքէր ուժգնապէս ընդդէմ այն դադարաբարին որ եկեղեցական գործերու վարչութիւնը Չարին իրեն շնորհուած ըլլայ:

Նիկին չբաւականացաւ երկու իշխանութիւններն հաւասարակից հռչակելով, այլ աւելի յստաջ գնաց և յայտարարեց թէ՛ Բահանայութիւնը մեծ է քան զԹագաւորութիւն, վստն զի քահանան գերագոյն իշխանութիւնը չընդունիր Թագաւորէն, մինչդեռ Չարը պէտք է օժտմն ընդունի քահանայէն որպէս զի կարենայ կառավարել կայսրութիւնը:

Ամենամեծ անիրաւութիւն կը համարէր որ Չարը կարենայ եպիսկոպոս լին դատել: Այդ իշխանութիւնը Աստուծոյ չէ տուած Չարին, կ'ըսէր:

Նիկին յայտնեց նաեւ թէ՛ պաշտօնանկ պիտի ըլլալ այն եկեղեցականը որ կ'ընդունի քաղաքային իշխանութեան իրաւասութիւնը իր վրայ:

Եւ սակայն Մեծ Պատրիարքը պաշտօնանկ եղաւ և մեռաւ աքսորի մէջ:

Նիկին պատմութիւնը ամփոփումն է Ռուսիոյ ինքնակալութեան և Ռուս ազգին կրօնական քաղաքականութեան:

Նիկինի վարդապետութիւններուն հա-
կառակորդ հանդիսացան Ջարը, Ռուս
եկեղեցականութիւնը, Ռուսիոյ զարգաց-
եալ գասը, Ռուսիոյ հասարակ ժողովուր-
դը, ըսել է համայն Ռուսիա :

Ջարը չէր կարող համակերպիլ այն
վարդապետութեան թէ՛ ինքն է որ քա-
հանայէն կ'ընդունի իր իշխանութիւնը :

Ռուս եկեղեցականութիւնը չէր կրնար
հետեւիլ Նիկինի : Այդ եկեղեցին առանձ-
նացեալ կացութեան մէջ է . յոյս չունի
արտաքին օգնութենէ . «բնապէս» միւս ե-
կեղեցիները օգնութիւն մը չէին կարող
ընել իրեն . այդ յուսակաւ եկեղեցիներն
իրենք ամէնքն ալ կարօտ էին Ջարին ա-
ջակցութեանը ու պաշտպանութեանը :

Նիկինի վարդապետութիւնները կրնային
անըմբռնելի համարուիլ Ռուս եկեղեցա-
կանութեան, որ բնահանուր օրթոտոքսու-
թեան մասն է : Ամէն ատեն եւ ամէն ու-
րեք օրթոտոքս եկեղեցականները իրենց
ներքին վարչութիւնը համաձայնեցուցած
են քաղաքային իշխանութեան վարչական
կազմակերպութեան հետ . հետեւաբար
Ռուս եկեղեցին ալ, իբր «բնապէս» եկեղե-
ցի, առանց դժուարութեան կ'ընդունի այն
կազմակերպութիւնը զոր իրեն կուտայ
Ռուս ինքնակալութիւնը :

Եկեղեցական համագումար ժողով մը
դատաւարաբար Նիկինը եւ զնա պաշտօնտնի
ըրաւ :

Հասարակ ժողովրդին համար Ջարը
Օծեալ Տեառն է, Աստուծոյ ներկայացու-
ցիչը, որմէ կը բխին ամէն բարիք, ամէն
պարգեւ : Այդ ժողովրդին համար ոչ ոք
գեր ի վերոյ է կամ հաւատարմ Ջարին :

Երբ Նիկին գրկուեցաւ իր Պատրիար-
քական գահէն, իբր շնորհ Ջարը թոյլ տը-
ւաւ անոր երթալ առանձնանալ այն փոն-
քըն որ կը կոչուի Նոր-Երուստղէմ եւ զոր
Նիկին ինք էր գծադրած ի նմանութիւն
Ս. Գերեզմանին եւ Գողգոթայի : Նիկին
մարմինը այդ վանքին մէջ է, եւ սակայն
Ռուս գիւղացիներ երբ ուխտի կ'երթան
այդ վանքը, չեն համբուրեր սաւայատակն
որ կը ծածկէ Մեծ Պատրիարքին սկրոտին :

Եթէ Նիկին կաթոլիկ եղած ըլլար եւ
ինչ որ ըրաւ Ռուս եկեղեցւոյ համար,
գայն ընէր Հռոմի, կաթոլիկ ժողովուրդ-
ները պիտի պաշտէին զնա իբր սուրբ :

Իսկ զարգացեալ դասին համար Նիկինի
վարդապետութիւնները անհասկնալի մը-
նացին . աշխարհական թէ՛ եկեղեցական
դատաւարաբար զնա թէ՛ իր պահանջում-
ներովը եկեղեցին եւ ինքնակալութիւն
հակառակամարտութեան մէջ կը դնէ :

Այսպէս տկներեւ կը տեսնուի թէ՛ ան-
կախ, ազատ եկեղեցւոյ մը դաւադարը
Ռուսիոյ համար չէ :

Մեծն Պետրոս իր ժողովրդի դադա-
վարները լաւ ճանչնալով Ազգային եկե-
ղեցին կազմակերպեց, այնպէս որ այդ
եկեղեցին Ջարին գերազահութեան ներ-
քեւ մտնէ ամբողջովին :

Նիկինի դատաւարտութեամբ տկարա-
ցած էր Ռուսական Պատրիարքութիւնը
եւ սակայն Ռուսիայի Վերանորոգչին այն-
պէս իմն թուեցաւ որ այդ Պատրիարքու-
թիւնը, մինչեւ իսկ իր տկար կացութեան
մէջ, տակաւին պէտք եղածէն աւելի զօ-
րեղ է : Մեծն Պետրոս ջնջեց Ռուսական
Պատրիարքութիւնը եւ Ռուս եկեղեցին
կազմակերպեց նոր հիմերու վրայ :

Ռուսական եկեղեցւոյ դրուած այդ
կազմակերպութիւնը ապագային օրինակ
եղաւ քրիտոնեայ միւս եկեղեցիներու ներ-
քին կազմակերպութեան : Մեր եկեղեց-
ւոյ դրուած Պաշտօնէի հասկնալու հա-
մար պէտք է ուրեմն գիտնալ Ռուս եկե-
ղեցւոյ կազմակերպութիւնը :

Մեծն Պետրոսի առաջին նպատակն ե-
ղաւ տկարացնել Կրօնական իշխանութիւ-
նը, եւ այդ նպատակին հասնելու համար,
նախ գլխատեց եկեղեցին, ջնջեց Պատ-
րիարքը եւ անոր տեղ դրաւ հաւաքական
իշխանութիւն, այսինքն Սինօդ մը : Իշ-
խանութիւնը փոխանակ մէկ ձեռքի մէջ
ամխտիտելով զօրաւոր ըլլալու, բազմա-
թիւ անձեկու մէջ բաժնուելով տկարա-
ցաւ : Այժմ «Արքայապետ Սինօդը» Բեդ-
րսպուրկէն կը կառավարէ Ռուսական ե-
կեղեցին :

Մեծն Պետրոսի հաստատած Սինօդը
քիչ թէ շատ փոփոխութիւններու ենթա-
կուելով այժմ իր վերջնական կազմակեր-
պութիւնը ստացած է :

Սինօդի անդամներու ստուար մեծա-
մասնութիւնը եպիսկոպոս է, իսկ եկեղե-
ցական զանազան դատակարարն ինչպէս

վարդապետ, տէրտէր իրենց ներկայացուցիչներն ունին:

Սինոդին նախագահն է սովորաբար Նովկորոտի և Բեդրոսպուրի մետրապոլիտը:

Սինոդի անդամներու թիւն Հաստատուն չէ: Ըստ պարագայներու անդամներու թիւը կ'աւելնայ կամ կը նուազի:

Անդամները զանազան մասերու բաժնուած են. մնայուն անդամներ կան եւ փոփոխելի անդամներ:

Սինոդի բոլոր անդամները Չարն ինք կ'ընտրէ:

Սինոդին մէջն է կայսեր մի ներկայացուցիչն որ կը կոչուի Աւագ Պրօկուրօր — (Օղեք Պրօկուրօր):

Այս պաշտօնեայն որ եկեղեցականներու Հանգչալ կ'անձնաւորէ քաղաքային իշխանութիւնը միշտ աշխարհական մըն է:

Մեծն-Պետրոսի Հրահանգներուն Համեմատ Պրօկուրօրը «Չարին աչքն է»:

Պրօկուրօրի պաշտօնն է հսկել սրպէս զի եկեղեցական բոլոր գործերը անօրինութիւն կայսերական — աշխարհական Համաձայն:

Ռուսիոյ մէջ կրօնից պաշտօնէութիւն չկայ. այլապէս ան եկեղեցիները ենթարկեալ են Ներքին Գործոց նախարարութեան, իսկ Օսթոտքս եկեղեցին — որ ազգային եկեղեցին է — կը կառավարուի Սինոդով որ Պրօկուրօրի հսկողութեան ներքեւն է:

Պրօկուրօրը ըլլալով կայսեր ներկայացուցիչը, կայսերական բոլոր իրաւունքներն անոր միջոցաւ ի գործ կը դրուին: Կայսեր և Սինոդի միջնորդն է Պրօկուրօրը, իրմով կը կատարուին ամէն հաղորդակցութիւնները կայսեր և Սինոդին միջեւ: Ինքն է որ Սինոդին կ'ենթարկէ կառավարութեան պատրաստած օրինաց ճրագներն որք եկեղեցական գործերու կը վերաբերին, և կայսերական փաւերացումին կը մատուցանէ Սինոդին վճարած կարգադրութիւններն:

Ազգային եկեղեցին վարդապետին մէջ ոչինչ կը կատարուի, ոչինչ կը գործադրուի առանց Պրօկուրօրի մասնակցութեան: Ինքն է որ կ'առաջարկէ և ի գլուխ կը հանէ գործերն. ինքն է որ գործադրել կուտայ տրուած որոշումներն: Առանց Պրօկուրօրի փաւերացումին Սինոդի

ոչ մի վճիռ արժէք ունի: Երբ Սինոդի որոշումներն իրեն հակառակ թուին Պրօկուրօր վէճի իրաւունքն ունի:

Ռուսական եկեղեցին ունի վաթսուներեք սրբ կը կառավարուին եպիսկոպոսներով: Թեմական եպիսկոպոսները կ'անուանուին կայսրէն. Սինոդը կայսեր կը ներկայացնէ երեք հափաբարներ որոց մին կայսրը կ'անուանէ թեմական եպիսկոպոս: Սինոդէն իրեն ներկայացուած երեք ընտրելիներու ցանկին մէջէն կայսրը, ընդհանրապէս, թեմական եպիսկոպոս կ'անուանէ առաջին ընտրելին: Ընտրութեան այս եղանակաւ Ռուսները կը կարծեն թէ եկեղեցւոյ իրաւունքները եւ Պետութեան շահերը իրարու համաձայնեցուցած են:

Թեմական եպիսկոպոսները ենթարկուած են Սինոդի իշխանութեան. սակայն իւրաքանչիւր թեմական եպիսկոպոսի քով կայ Կրօնական Ժողով մը որ կը կոչուի Կօնսիաբօրէ: Թեմին մէջ Կօնսիաբօրէյի պաշտօնը կրնայ բաղադատուիլ կայսրութեան մէջ Սինոդի ունեցած պաշտօնին: Թեմական եպիսկոպոսը Սինոդին կը ներկայացնէ եւ Սինոդը կ'անուանէ Կօնսիաբօրէյի անդամները: Առանց եպիսկոպոսի փաւերացումին Կօնսիաբօրէյի որոշումները զօրութիւն չունին:

Իւրաքանչիւր Կօնսիաբօրէյի քով դըրուած է աշխարհական Ատեհադալիր մը, որուն պաշտօնը կրնայ համեմատուիլ Սինոդի Աւագ Պրօկուրօրի պաշտօնին. Այդ Ատեհադալիր թեմական Կօնսիաբօրէյի պետն է: Աւագ Պրօկուրօրը կը ներկայացնէ եւ Սինոդը կ'անուանէ թեմական Կօնսիատօրիայի Ատեհադալիրը: Այս Ատեհադալիր իր տեղեկագիրները կը խրկէ աւագ Պրօկուրօրին, մինչդեռ եպիսկոպոսն ու Կօնսիաբօրէյն իրենց աեղեկագրերը կը խրկեն Սինոդին:

Այս է ռուսական եկեղեցւոյ վարչական կազմակերպութիւնը իր ընդհանուր գծերուն մէջ:

Եկեղեցական այս մարմինն վերեւ է Չարը, իբր պաշտպան կրօնքի եւ եկեղեցւոյ. սակայն Չարը եկեղեցական նուիրապետութեան աւելի տէրն է քան գլուխը: Ինքնակալը եկեղեցւոյ դաւանանքի եւ վարդապետութիւններու մէջ յետին հաւատացեալէն աւելի կարծիք մը չկըր:

նար յայտնել: Ձարին միջամտութեան սահմանը եկեղեցւոյ մատակարարութիւնն է. իսկ իր գլխաւոր առանձնաշնորհումը կը համարուի եկեղեցւոյ պաշտօնեայնեան ընտրութիւնը:

Այժմ ուսն ինքնակալին շուրջը չտեսնուիր ստուերն անգամ եկեղեցւոյ գերագահութեան: Առաջները նորընտիր կայսեր մը թագադրութեան տուն, կայսրը կ'իջնէր իր Գահէն և կը յառաջանար Սեղանը ուր Պատրիարքը կ'օծէր զնա և թագը կը կապէր, իսկ հիմա թագադրութեան միջոցին Ձարը իր գահէն չչարժիր: մետրապոլիտը թագը կը տանի կայսեր զոր նա իր ձեռքովը կը դնէ իր գլուխը, որով կ'ուզէ ցոյց տալ թէ իր իշխանութիւնը ոչ ոքէ կ'ստանայ, այլ իր Իրաւունքէն:

Նորընտիր կայսրը թագադրութեան օրը, իբր օրթօտոքս իշխան, Հասաօօքը կը կարդայ, սակայն չխոստանար, ինչպէս կը խոստանային նախկին Ձարերը, անվրէժար պահպանել եկեղեցւոյ իրաւունքները և յարգել եկեղեցւոյ Կանոնները:

Բ

Այս համառօտ տեղեկութիւնները, զոր քաղած ենք օտարազգի պատմիչներէ, շատ պարզ կերպով ցոյց կուտան թէ ի՞նչ են ուսն ինքնակալութեան հաստատուանդրութեան եկեղեցւոյ և եկեղեցական իշխանութեան նկատմամբ:

Ռուս ինքնակալութիւնը երբ իր Ազգային եկեղեցին իրեն կը հպատակեցնէ՝ շատ բնական է որ աւելի խիստ վարուի օտարազգի դաշնակցութիւններու համար: Ռուս կառավարութիւնը ուզած է ուսն եկեղեցւոյ նմանեցնել բոլոր այլադաւան կրօնքներու ներքին կազմակերպութիւնը: Կառավարութեան նպատակն եղած է, մէկ կողմէն՝ օժտել զանազան Գաւառութիւնները ներքին վարչութեամբ, որպէս զի օտար ազդեցութեան ներքեւ չգտնուին. միւս կողմէն՝ ուժեղնապէս կեդրոնացնելով կրօնական վարչութիւնները, զանոնք ամէնքն ալ իր ձեռքին մէջ ունենալ: Այս կեդրոնացում համարուած է մին այն միջոցներէն որոցմով կարելի կը համարուի վտանգէ զերծ պահել այդ մեծ կայսրութիւնը:

Գրեթէ միւսնոյն վարչական կազմակերպութիւնը բոլոր կրօնքներու:

Բողոքականներն ունին իրենց տեղական Կենտրոններն, որոց վրայ կ'իշխէ ընդհանուր Կենտրոն մը, իբր Սինօդ: Այդ կեդրոնական Կենտրոններն ունին իր Պրահարներ:

Կաթոլիկութիւնը, որ շատ գիւրաթեք չէ, պարտաւորուած է համակերպիլ այն Պապին, որ կը հակառակի կաթոլիկութեան ոգւոյն:

Կաթոլիկ թեմերն ունին իրենց Կենտրոնները, որոց անդամները կը վաւերացունին քաղաքային իշխանութիւնէն:

Այդ Կենտրոններու վրայ կը հսկէ Սինօդ մը որ կը կոչուի Հոգեւոր Կոնսիլիօն (քօլլէժ) որ կը գտնուի ի Բեդերսպուրի:

Կաթոլիկ Կենտրոնները ունին իրենց աշխարհական Աւանդակները, և կեդրոնական Սինօդը իր աշխարհական Պրահարներ:

Պապերը միշտ հետամուտ եղած են, և վերջի ժամանակներս ալ Լէօն Ժ. շատ աշխատեցաւ որ կաթոլիկ եպիսկոպոսներն իրենց հօտը հովուեն կաթոլիկ եկեղեցւոյ հոգւոյն ու աւանդութիւններու համեմատ, և մանաւանդ որ աշխարհական Աւանդակներն ու Պրահարները չմիջամտեն կաթոլիկներու հոգեւոր գործերու: Սակայն սպարդիւն եղան պապութեան բոլոր աշխատութիւններն ու բանակցութիւնները:

Իսլամութիւնն ալ Ռուսիայի մէջ բազմակից է քրիստոնեայնեան: Իսլամ հոգեւոր պաշտօնեայնեանք — **Իմամներ** — թէպէտ պէտք է ընտրուին ժողովրդէն և վաւերացունին կայսրէն, սակայն սովորութիւն դարձած է որ այդ ընտրութիւն տեղի չունենար, և **Իմամները** ի պաշտօն կը կոչուին ուղղակի կայսերական Ուլազով:

Միւս թիւերն ալ, իբր Առաջնորդը նրկատուելով, չըմպաւորուած են Կենտրոններէ:

Շատ երկար կ'ըլլայ մի առ մի առաջ բերել Ռուսիոյ բոլոր ժողովուրդներու կրօնական կազմակերպութիւնը: Միւսնոյն ոգին, միւսնոյն ուղղութիւնը կը տիրէ ամէն ուրեք: Եւ գիտենք թէ ուսն կայսրութեան մէջ ՓԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ՄԻԼԻՈՆ կը հաշուին անոնք որք դուրս են

Ռուսաց Ազգային եկեղեցիէն, ու ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ՄԻՒԼԻՈՆ է աւելի ալ ուստագաւաններ կան որք կը հարստակին կեղրոնացումի խիստ դրութեան: Այնքերեւ կը տեսնենք թէ Պալատէնիան զոր ուսու կառավարութիւնը տուած է մեր եկեղեցւոյ, յատկապէս մեր եկեղեցւոյ համար չէ, այլ մենք ալ վիճակակից ենք 90.000.000 քրբիստոնեայներու և ոչ-քրիստոնեայներու:

Գ

Այս յօդուածի սկիզբն ըսինք թէ՝ Ռուսիոյ ընդհանուր կրօնական քաղաքականութեան վրայ յոտոյգ տեղեկութիւններ կրնան մեզ ուղեցոյց բլլալ Պալատէնիայի մասին խորհելու և գործելու մասին: Համառօտիւ ներկայացուցինք այդ տեղեկութիւններ, որոցմէ կը տեսնուի թէ Պալատէնիայի այն տրամադրութիւններն, որոց դէմ մենք կը մարանչինք, Ռուս Ինքնակալութեան քաղաքականութեան ամէնէն աւելի սիրելի տրամադրութիւններն են:

Ուրիշ ազգային պատմական տեղեկութիւններ ցոյց կուտան թէ ապարդիւն մնացած են այն փորձեր սրք մինչեւ ցարդ կատարուեցան Պալատէնիայի բարեփոխութիւն ձեռք բերելու համար:

Ներսէս Ե. Կաթողիկոս 1848ին և 1856ին Պալատէնիայի ինչ ինչ յօդուածներու փոխփոխութիւն խնդրած է, նոյնն ըրած է նաև Մատթէոս Կաթողիկոս: Այս մասին առաջ կը բերենք Կաթողիկոսական Յանձնաժողովոյ (1883ի) տեղեկագրէն հետեւեալ տեղեկութիւնները:

«Հոգեւոյ Տէր Ներսէս Ե. Կաթողիկոս պատասխան կ'ընդունի իւր բաղըքներուն՝ թէ Պօլոթէնիայի քանի մը յօդուածոց փոփոխութիւնն անյարմար է առաջարկել Կայսեր, ուստի երբ Պօլոթէնիայի ամբողջ յօդուածոց փոփոխութիւնը հաղորդէք, այն ժամանակ կարելի կը լինի ներկայացնել Կայսեր ի հաստատութիւն:

Ասոր վրայ երջանկայիշատակ Հայրապետը մասնաժողովոյ մը ձեռք ծրագիր մը խմբագրել կուտայ, բայց չ'հասանելով անոր՝ ինքն իւր ձեռք կանոնադրութիւն մը կը խմբագրէ, և այն ինչ կը պարտատուի հմուտ եկեղեցականներէ և աշխար-

հականներէ ժողով մը կազմել, և նոյն կանոնադրութեան նկատմամբ նոյն այն ժողովոյ գիտողութիւններն լսելէ յետոյ՝ Ռուսաց Տէրութեան ներկայացնել զայն ի հաստատութիւն, ահա՛ 1857 Փետրուար 13ին յանկարծապէս մահուամբ կը վախճանի:

Յաջորդ Հայրապետն՝ Հոգեւոյ Տ. Մատթէոս Ա. Կաթողիկոս եւս մասնաժողովոյ մը ձեռք պարտատեալ «ԿԱՐԳ ԵՒ ԿԱՆՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅԵ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ» անուն ծրագիր մը՝ թէ և թերի և անբաւական, կ'առաջարկէ Ռուսաց կառավարութեան 1863 թուականին, և կը խնդրէ որ հաստատուի և գործադրութեան դրուի փոխանակ Պօլոթէնիայի, սակայն առանց պատասխան մը իսկ առելոյ կը վախճանի վշտալի Հայրապետն ի 22 Օգոստոսի 1865:»

Իսկ մասնաւոր և սոտոյգ տեղեկութիւններէ գիտենք՝ թէ Գէորգ Գ. Կաթողիկոսը ինքն եւս բանակցութեան մտաւ Ռուս կառավարութեան հետ Պալատէնիայի բարեփոխութեան համար. Ռուս կառավարութիւնը հաւանութիւն տրուաւ, և առաջարկեց Կաթողիկոսին ներկայացնել այն բարեփոխութիւններն զոր հարկ կը համարի: Բայց դժուարութիւն մը ծագեցաւ. Ռուս կառավարութիւնը կը պահանջէր որ Կաթողիկոսն ինք միայն բանակցութեան մասնէ այդ բարեփոխութիւններու մասին, մինչդեռ Կաթողիկոսը կը պահանջէր որ Ազգային եկեղեցական համագումար ժողով մը որոշէ այն բարեփոխութիւններ զորոս հարկ է ընել Պալատէնիայի մէջ: Ռուս կառավարութիւնը չ'համակերպեցաւ Կաթողիկոսի առաջարկին, Կաթողիկոսը չը համակերպեցաւ Ռուս կառավարութեան առաջարկին, և Պալատէնիայի բարեփոխութեան խնդիրը մնաց երեսի վրայ:

Թէ ի՞նչ պատահեցաւ Կաթողիկոսի վախճանումէն յետոյ այդ յայտնի է: Մեր Ազգ. Ժողովը հաստատ ուղղութեան մը չ'հետեւեցաւ, և ոչ ալ խնամուէն հետատես քաղաքականութեան մը:

Այժմ՝ ի՞նչ պիտի ընէ Ազգ. Ժողովը, Կը կարծենք թէ մեր փոխադաժին համե-

մատ Պալատէնիայի լարեւորում կարելի չպիտի ըլլայ ձեռք բերել, այս մասին համոզուած ենք:

Ի՞նչ միջոց կը մնայ մեզ մեր նպատակին հասնելու: Զանալ ազգային համերաշխ քաղաքականութեամբ գործնականին մէջ չէզոքացնել Պալատէնիայի այն տրամադրութիւններն որք մեզ ամէնէն աւելի անտանելի կը թուին:

Կաթողիկոսական երկու ընտրելիներու յօդուածը մինչեւ 1885 թուականին իբր պարզ ձեւակերպութիւն մը կը նկատուէր: Ներսէս Ե. Կաթողիկոսի ընտրութեան դէմ երբ առարկութիւններ ըրին Նիկիոյ կայսեր, «Ժողովրդին ձայնը իմ ձայնս է», ըսաւ երկաթեայ էջոյցը եւ վաւերացուց այդ ընտրութիւնը: Մեր անհետատեւութիւնը կենդանութիւն տուաւ այդ մեռեալ յօդուածի:

Մեր իրաւունքները միշտ վերապահելով հանդերձ, մեր բողոքները միշտ ընելով հանդերձ,—ինչպէս կ'ընեն նաեւ Ռուսիոյ ուրիշ այլադաւան ժողովուրդները,—ջանանք որ բողոքներու եւ սպառնալիքներու ազմուկի ժամանակ իրական օգուտները ձեռքէ հանելով փնտնէրու չենթարկուինք:

Լաւ Կաթողիկոս մը ամէն ինչ է. եկեղեցւոյ կեանքն է. մեր բոլոր քաղաքականութիւնը պէտք է ըլլայ Կաթողիկոսական նոր ընտրութեան միջոցին այդպիսի Կաթողիկոսի մը ընտրութիւնն ապահովցնել:

Եւ Ռուսիոյ այլադաւան միւս բոլոր ժողովուրդներու հետ սպասենք այն օրունան ուր խղճի եւ կրօնքի տգիտութիւնը հռչակուի Ռուսիոյ մէջ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԽԱՂԱԽԻ

Մտի՛ր ու մտայլ գիշեր էր: Գեկտեմբերի կծու հով մը կ'ունար այսահար, հոն, Սիւլտար, Գարաճա-Ահմէտի գերեզմանատան նոճիկներուն մէջէն որոց գալարատանջ հեծեծիւններն օդը կը լեցնէին: Երկինքը սեւ էր պատած, աստեղային նշոյլի մը հետքն անգամ չ'երեւցնելով:

Գիշերապահը ժամ վեց կը դարնէր յայնժամ Ս. Կարապետ եկեղեցւոյ դրան մարմարեայ սեմին վրայ: Գիշերուան այդ մեռութեան մէջ, այդ մենակերպ նուազն, որ մէկ քանի վայրկեանը անգամ մը կը կրկնուէր, մարդկութեան մէկ ողբն էր՝ բնութեան ընդհանուր կոծին խառնուած, — ողբն հէգ գիշերապահին, որ այդ ցրտասարսուռ գիշերին՝ կատաղի հովին դէմ կը պարզէր իր կուրծքն, եւ կեանքն ալ գուցէ:

Շրջակայ տուններուն մէջ, որոց ուրուագիծներն ա'լ չէին որոշուեր միահեծան խաւարին մէջ, ա'լ լոյս չէր մնացած: Ս. Կարապետ եկեղեցւոյ բարձրադիտակ վանդակատունը միայն կը պարզէր իր ուրուատեսիլ կատարն, ու անոր ձիւղ դէմը, թափուր դեանին մէջ, ուր ժամանակաւ այրած տուններու վրած պատերը միայն կանցանուցիր, յաղթ նոճի մը իր ցցունապարդ կատարը կը խոնարհեցնէր մռնչող հովին տակ:

Ու գիշերապահին ողբը նորէն լլուռեցաւ՝ բնութեան անհուն ազադակին խառնուած. մէ'կ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթն: Այդ մարդը մինաւորիկ կը հսկէր բնութեան տաղնապին:

Գիշերուան այդ ժամուն, այդ խառնութիւն ու մրդկին մէջ, գիշերապահը միայնակ չէր սակայն: Ս. Կարապետ եկեղեցւոյ դիմացի տափարակին մէջ, յաղթանոճ նոճիկն տակ, մարդ մը կ'անդունէր կ'սպասէր չորս ժամէ ի վեր:

Քստենքեք քստնչորս տարեկան երիտասարդ մըն էր, եւ ժամը հինգէն ի վեր հոն կ'սպասէր փախտուայ ծխախոտի, զոր նոյն գիշերն իսկ էրէնքէօյէն պիտի ստանար:

Իրդէ հասաւ հեճակի մը մէջ փաթիթը

ւած էր գլխէն մինչև ստորը, այլ կ'երեւայ թէ կը մտէր, որովհետեւ կէս ժամը անգամ մը բերնին կը տանէր ուով չէր մը, զոր իր վերարկուն լայն գրպաններուն անդունդներուն մէջ կը սահեցնէր սպառ:

Համբարձում Գիրէճճեան կը կոչուէր, արհեստով գրաչար: Ճեմարանին մէջ, — որ հիմա այրացուեր փլատակաց կոյտ մըն է լոկ տխրատեսիլ, — իր նախնական ուսումն ստացած էր, և հազիւ տասն եւ վեց տարեկան՝ գործի ելած էր, ընտանեացն օգնելու համար: Գրաչար եղած էր: Իր շահած շարաթական դոյզն գումարը գրեթէ ամբողջութեամբն հօրը կուտար, որպէս զի կարենար պահել իր բաղմանդամ ընտանիքն, — հայր, մայր, և վեց զաւակ, որոց չորսն աղջիկ: Հայրը դարբին էր, քիչ չափ կը վատկէր, և «վարդի պէս կ'ապրուէին»:

Օր մը, հայրը մեռաւ: Սեւ օրը այն օրը եղաւ իրենց տանը համար: Այն ատեն, Համբարձում ութսուն զրուշ կ'առնէր շաբաթը: Այդ գումարէն պէտք էր տան վարձք վճարել, և ապրեցնել, իրմէ զատ, դեռ վեց հոգի: Մայրն և երկու հասուկ աղջիկները սկսան դուրսի կար կարել: Կղտիկ մանչը, Արշակը, հազիւ տասնմէկ տարեկան, դպրոցէն հանեցին և ժամագործի մը քով տունն շարաթական տասը զրուշով, որուն հինգը՝ շաբաթ երեկոյին՝ կը բերէր մօրը կը յանձնէր: Եւ սակայն, երկու ամիս չ'անցած, հացադործն սկսաւ ա'լ հաց չ'տալ, և մտավաճառն ու նպարավաճառը՝ տանը գուռը ափ տաին:

Համբարձումի համար, տանջանքն ըսկըսաւ, նիւթական և բարոյական ահռելի տանջանք: Յերեկները պանիր հաց կ'ուտէր, և օրը քսան փարա խնայելու համար՝ Սկիւտարի առաջին ու վերջին շոգեհոտերով կ'երթեւեկէր: Այլ աղկից աւելի իր սիրտը ճմլող բանն էր տեսնել իր խեղճ մայրն և մատաղատի քոյրերը որ սակեղին տակ կը ծակծկէին իրենց մտաները՝ մինչև կէս դիշերն անցած:

Չյուստահատեցաւ սակայն, և գլուխն ասպին անդին դարկաւ: Այն, եթէ կարենար բացէն շահ մը ունենալ:

Այդ միջոցին էր որ, իր գալոցական բնիկերներէն մին, որ յետոյ իր «Երէ Բնագաւը» ապա Բոլոսի փոխած էր, և ու-

րուն ի'նչպէս ապրիլն ոչ ոք գիտէր, իրեն առաջարկեց փախստեայ ծխախոտ վաճառել, զոր ինք կ'երթար բերել Չինկեանէ քէօյէն, Չէրքէսքէօյէն, Էրէնքէօյէն և այլն: Համբարձում վտանգն աչքն առաւ, եւ ամէն առտու կրնակին և կուրծքին վրայ չորս հինգ ծրար ծխախոտ կ'ապած՝ կը տանէր զայնս Պոլիս իր բարեկամներուն ծախելու:

Ամիս մը այսպէս շարունակեց: Ամիսն յետոյ, երկու ոսկի շահ մնացած էր իրեն: Տանը մէջ սկսան քիչ մը ազատ շունչ առնուլ:

Այն ատեն, պատանին, իր մօրն եւ քոյրերուն բեռը բոլորովին թեթեւցնելու համար, յանդուգն դադարեալ մը ունեցաւ: Փոխանակ միջնորդի դեր կատարելու, ինքն անձամբ ուղեց փախստեայ ծխախոտ բերել տալ: Կիրակի օր մը Էրէնքէօյ գնաց, և հոն ամէն բան կարգադրեց Գամպուր Մէհմէտ անուն հողատէրի մը հետ:

Իրական վտանգն յայնժամ սկսաւ: Ծխախոտ փախցնելը, մանաւանդ Րէփի դէտերուն խիստ հսկողութեան ներքեւ, դիւրին գործ չէ: Թողէք տուգանքն եւ բանտարկութիւնը, պէտք է նաեւ ամէն վայրկեան մաքսուիլ դէտերուն, Իւնչիներուն դէմ, և դաշոյնն ու ատրճանակը ձեռքէ չ'թողուլ: Յանդուգնութիւնը չէր պակսեր քսանամեայ պատանին քով, եւ հսկառակ մօրը աղերսագին սպառաւորներուն, տարիէ մը ի վեր Համբարձում իր հաշուոյն կը գործէր: Իրարու վերայ շարաթական ոսկի մը շահ կ'ունենար, և հանդուցեալ դարբինին տունն իր բարեկեցիկ վիճակը կ'ստանար հետզհետէ: Եւ երբ Համբարձում կը տեսնէր որ քոյրերն իրենց վատտակն իրենց հագուստին միայն կը նուիրէին այլ եւս, ա'լ կը մոռնար իր բոլոր յոգնութիւններն ու բոլոր սրտադողերը:

Ու դիշերապահին ճոկանը վերստին հնչեցուց իր տխուր ու մեհակերպ նուագը, — մէ'կ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթն, ութ, ինն: Այս անգամ սակայն ա'լ առջի ուժգին ողբը չէր: Հարուածներն հետզհետէ կը տկարանային մարմարեայ սեմին վրայ, ու հիմակ նուազ

հեծեծիւնի պէս կը մարտնչէր։ Գիշերապահն ալ, բնութեան պէս, յոգնած էր։ Հովը դադարած էր տակաւ առ տակաւ։ Յուրորը կը սաստկանար։

—Տաւա չեկան, միմռաց Համբարձում՝ քիթին տակէն սոսկալի հայհոյութիւն մը քրթմնջելով։ Ահապա փորձանքի՞ մը հանդիպեցան։

Միւսնոյն վայրկեանին՝ ականջները սրեց։ Քայլափոխի մը թեթեւ ձայնը հետզհետէ կը մօտենար։ Մութին մէջ զանգուած մը սկսաւ որոշուիլ, որ զգուշութեամբ կը յառաջանար։ Մարդկային ձայն մը՝ մեղմիկ իմն չլնչաց։

—Հո՞ր էս, Համբիկ։

—Հա՛ւ։

Նորեկը նոճիին տակ հասաւ։

—Ո՞ւր է Քէլէկը, հարցուց Համբարձում։

—Կուգայ կոր։

—Շատ ուշացաք։ Վախցայ որ ճամբանդ չե՛լայի հանդիպեցաք։

—Ձէ՛, փառք Աստուծոյ. ահա առ հաշտին... ճերմակ ճուր կայ քովդ։

—Ձէ՛, ուր է։ Ա՛ռ, մէջը կտոր մը ձգէ։

—Տուր։ Յուրորը ճիշերս անցաւ։

Եւ երկար ուժգն մը կուլ տուաւ անյադարար։

—Մօ մէջը բան չմնաց, Կոկո՛ւղ։

Նորեկն այս անուամբ կը ճանչցուէր իր բարեկամաց շրջանակին մէջ։ «Կոկոուղ»ը կրճատումն էր «Կոկորդիլոս» բառին, որուն արժանի դատած էին զինքն իր ընկերները՝ իր երկար չորուկ հասակին ու սրածայր գլխուն համար։ Ինք խաւիճիներու խաւիճն էր. այսինքն գիւղերէն մինչեւ քաղաք ծխախոտ բերող բեռնակրին առջեւէն կ'երթար հարիւր քայլ հեռաւորութեամբ, որպէս զի եթէ դէտերուն հանդիպի, սուլէ և բեռնակիրը փոխէ իր ճամբան։ Իր պաշտօնն ամէնէն վտանգաւորն է, որովհետեւ գործը միշտ դէտերուն հետ է։

—Նա՛, Քէլէկը կուգայ կոր, բսաւ Կոկոուղ՝ բռունցքովը պիտերը սրբելով։

Բեռնակիրը կը հասնէր։ Երեսնամեայ յաղթանդամ թուրք մըն էր որ երկար շունչ մը առնելով, դետին նետեց իր բեռը, քառսուն օխա փախստեայ ծխախոտ, զոր

չալակովը մինչեւ հոն բերած էր էրէնքէօյէն։

Համբարձում տուաւ անոր վարձքը, երկու մէճիտիկ, և մարդը ճակտին քըրտինքը սրբելով նորէն ճամբայ ելաւ՝ քայլելով էրէնքէօյ դառնալու համար։

—Աս թիւթիւնը հիմակ ո՞ւր պիտի տանիս, հարցուց Կոկոուղ։

—Խուզողունձուխ, Նիսիմին։ Առաջուրն է խօսած էմ։

—Աստուած կարողութիւն տայ։ Բաղդէտ, հա՛ւան քէտ պէտք է, վախաւ պանի չիկայ։

—Ձա՛նք քէրէին ճամբով պիտի տանիս. հոն ի՛նչի չի կենար։ Դուռն հիմա ո՞ւր պիտի երթաս։

—Սէլամըզ, քորն։ Վաղն իրիկուն դամ քէ հա՛ւալը լմնցունենք։ Կեցիր սա թէ՛-թէ՛-նը կռնակդ տեղաւորցունեմ անանկ էրթամ։

Ու ծխախոտի խոշոր պարկը չուանով հաստատեց Համբարձումի կռնակին վրայ։ Յետոյ, «գիշեր բարի» մը միմռալով, աներեւոյթ եղաւ խաւարին մէջ։

Համբարձում ալ ճամբայ ելաւ՝ իր ծանրօրեռան տակ կըքած։ Անարդեւ անցաւ Վանքի Այդուղն այրած տանց վիտակներուն մէջէն, Բոսթա Եղուիէն անցնելով՝ Խալֆային Պաղը մտաւ, յետոյ Ի. ճատիլէի բարձունքէն սկսաւ յառաջանալ դէպի Գունկունձուքի ձորը, Ֆրէշիկի Լեւրան ստորոտը։ Այլ հազիւ ձորին մէջ մը տած էր, կանգ առաւ յանկարծ։

Իրմէ քսան քայլ դէպի առաջ, չորս հինգ ձիաւոր դէտեր կ'սպասէին անշարժ։

Համբարձում վախկոտ չէր. գիշերուան այդ ժամուն, Եէնի-Մահալլէն մինչեւ Գունկունձուք այդ տաժանելի ոգեւորութիւնը միայնակ կատարելը ամէն մարդու գործ չէ։ Եւ սակայն սիրտն սկսաւ տրոփել։ Վեցհարուածեան րէվոլվէրը գըրպանն էր, և դաշոյնն ալ քովէն կախուած, բայց ինք միայնակ կրնա՞ր դիմադրել այդ խմբին։ Մէկ քանի անգամներ այդ տեսակ կռիւներու մէջ գտնուած էր, այլ իր հետ միասին չորս հինգ ընկերներ ալ կային այն տուն։

Կորսնցնելու ժամանակ չկար սակայն։ Արդէն, դէտերը տեսած էին զինքն, ու

րախնայեալ իր վրայ կը յառաջանային՝ իրենց ձիերուն քառասորով ընթացքով։

Համարածով համար երկվայրկեան մը անցաւ, ահաւելի երկվայրկեան մը։ Այն յանկարծական սրտիւթեամբ, զոր միտքը կ'ունենայ վտանգի նմանօրինակ վայրկեաններու մէջ, տեսաւ իր բռնուկը, իր քառասուն օխտ ծխախոտին համար ութսուն օր բանտ պառկելը, — որովհետեւ սէտկից պլատի կրնար վճարել դրաւեալ փոխտեսոյ ծխախոտի իւրաքանչիւր օխտին համար երկու մէճխտի կանոնադրական տուգանքը, — և այդ ութսուն օրուան միջոցին՝ իր ընտանեաց չարչարանքն և գիշերներն անօթի պառկելը գուցէ։ Այդ մտածումն ի՞նչ քաջալեր տուաւ իրեն, իր երիտասարդական անձնափառակ խիզախութեանը մէջ ի՞նչ անտահման ոյժ գտաւ, — ինք միայն կրնար գուրցել։ Սա իրաւ է որ երբ դէտերուն մեծը խրոխտ ձայնով պոռաց իրեն, թուրքերէն լեզուաւ,

— Կեցի՛ր,

երիտասարդը կայծակի արագութեամբ հանեց բէվովէրն և նոյն լեզուաւ պատասխանեց.

— Ճամբայ բացէ՛ք որ անցնիմ։ Թէ չէ, մէկիկ մէկիկ ձիէն վար կ'իջեցնեմ ձեզի։

Դէտերէն երկուքն, առանց կարեւորութիւն տալու այս սպառնալիքին, ձիէն վար իջան և սկսան երիտասարդին մօտենալ։

— Մի՛ մօտենաք, կը զարնեմ, գոչեց նորէն Համարածով։

Դէտերը ետ քաշուեցան երկու քայլ, և վարանեալ մնացին։ Բայց իրենց խրոխտակեան հրամանին վրայ, նորէն սկսան յառաջանալ, այս անգամ բէվովէր ի ձեռին։ Իրենք արածոնութիւն չունին կրակ բնելու խաշնձներուն վրայ. այլ կարծեցին թէ երիտասարդը բնաւ համարձակութիւն չզգլտի ունենալ իր սպառնալիքն ի դարձ գնելու, և յանդգնութեամբ յառաջ նետուեցան։

Համարածով գլխու սրոյտ մը ունեցաւ յայնժամ ու աչերը միտգնեցան. և առանց ըրածը գիտնալու, խելայեղութեամբ, պարպեց իր հրազէնը դէտերուն վրայ։ Դէտերէն մին, ցաւադին աղաղակ մը նետեց օդին մէջ, իր ձախ թեւը բռնեց՝ ուր մտած էր գնտակը, և յետոյ,

մռնչիւն մը արձակելով, պարպեց իր բէվովէրը, հազիւ մէկ քայլ հեռաւորութեամբ։

Բէվովէրին սայթմանը հետեւեցաւ ահաւելի աղաղակ մը։ Երիտասարդը ձեռքը սրտին տարաւ, ուր թափանցած էր գնտակը և կռնակէն դուրս ելած, և գետինը գլորեցաւ իր ծխախոտի բեռան տակ ծածկուած։ Դէտերն անմիջապէս վեր վերուցին գոյն։

Հինգ վայրկեան յետոյ, իր շունչը կ'աւանդէր՝ անհատկնալի բառեր մրմնջելով, մինչ գիշերապահներ ու ստիկաններ կը վազէին կուգային ձեպընթաց։

Հիմակ հովը դարձեալ կը փչէր ամէհի ու արշաւասոյր, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ։ Բնութեան տանջանքն էր այդ, անհուն թաւանջ մը ուր աւլցեալ են ամէն ողբերն ու ամէն մորմոքներն, բոլոր կոծերն ու հառաչանքները բոլոր։ Իր ընթացքին մէջ կարծես իր հետ կը բերէր իր կտրած անցած վայրերուն բոլոր աղաղակներն տենդագրգիւ ու հիւանդագին հեծկոտութիւններն համարո՞ւն, և հիմակ ալ իր հետ ընդ քարշ կը տանէր մեռնող երիտասարդին հուսկ յետին խռնչիւնը։

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

ՅՈՊՊԷԻ ԳԵՐԵՋՄԱՆԱՏՈՒՆԸ

(ՅԵՇԱՏԱԿ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ)

Օրն իրիկուն ըլլալու մօտ էր արդէն
 եւ կը հասնէր ժամն աղօթից ու խորման .
 Խոնջ, գլխիկոր, դառնար մէակն իր արտէն,
 Կանայք, տըղայք՝ թափառայած դային ման :
 Կը մարէին տակաւ շըշունչք քաղաքին
 Որ կը պարզուէ լերի բըլրակաց ի տոորոտ,
 Առ ծովեզերք՝ ոյր ալեաց մուռնչ մոլեգին
 Լըսուէր հեռուստ, զերդ օրհաս մը մահահաստ :

Մենք՝ ուղեւորքս՝ յոգնալատուակ, քրտնաթոր,
 Վեր կ'ելլէինք ճանապարհէն փոշիւից,
 Մերթ մեր ետին թողլով ժայռեր գետնափոր,
 Մերթ անցնելով զառիվերէ մ' սեպ ու ցից :
 Հոս՝ սարահարթ՝ հոն՝ խորտուբորտ էր ուղին
 Որ կը տանէր անդր ի բարձունս Յոպպէի :
 Նարընջինեաց պարտէվք մեր շուրջ՝ պարզէին
 Իրենց պըտուղ, գիրգ, գեղնորակ տնուանի՛ :

Հասանք ուրեմն ցանկապատի մը առջեւ,
 Հեռո՛ւ քաղքէն, պարտէզներէ՛ն ալ հեռու,
 Բլրոյ մ' գաղաթ, շուրջը ծառեր անտերեւ
 Ոյց խուսչներ բոյն են դարձած բուերու :
 Յընցոտիներ հազած կին մը սեւադէմ,
 Խաչակընքեց, բացաւ դռնակըն խարխուլ
 Յանկապատին՝ ուսկից պարզուէր մեր առ դէմ՝
 Ստուերամած դաշտ մը խողան և ամուլ :

Գերեզմաննոցն էր այն լըքեալ, արխուր գաշա,
 Որ իր ծոցին մէջ կը պահէր աղքատիկ
 Ժողովրդեան, ուխտաւորաց բարեպաշտ,
 Ոսկերտին և յիշատակն հանդարտիկ :
 Տապանաքարք և հողակոյտք ցիրեցան,
 Ժանտ-թըղենիք՝ անոնց վրայ հովանի,
 Ահա ի՛նչ որ ուղեւորին հանդէպ կան
 Այդ վայրին մէջ զոր սիրեցինք այնքանի՛ :

Ոյր մահաբոյր մենութիւնն ու սեւ ոտուերք
 Աւելի քաղցըր են հողւոց խառվայոյդ
 Եւ սրտերու որք արիւնստ կըրեն վէրք,
 Քան ցընծալից շըւինդք և փայլք, կեանք և լոյս .
 Հե՛շտ մենարան՝ ոյր ծոցն հանդէպ թշուառաց
 Քուենն օրօրի նուիրական քաղաքին
 Արձադանդովն՝ որ բարձրանայ առ Աստուած,
 Ողջունելով այդ տապաններ գերդ բաղին :

Ժամն էր խաղաղ: Երեկոթին թաղծութիւն
Պատէր ըզմեզ՝ այդ մեռելոց առնթեր .
Ո՛չ մէկ չըշուկ: Հոգիին միայն սօսախիւն
Ճըճիներու բըզղիւնին հետ խառնըւէր:
Արեւն ի մուտս էր խոնարհած, վեհափառ,
Բայց չէր անցած օրուան տաքը տօթակէզ:
Հոգիաց խորէն կ'ելլէր շոգի մ'անըստառ .
Խամբելով ծառ, ծաղիկ, դալար, խոտի դէզ:

Այդ լըռութեան մէջ պատկառոտ, անխըռով,
Յանկարծ ձայն մը բարձրացաւ մեղմ, անուշակ,
Ձայն՝ որ թմբերած հոգիներու ցունց տալով
Կեանք կը սըփռէր կարծես այն սեւ ծառոց տակ:
Մոմունջ մըն էր, մեղամաղձիկ, հեշտօրօր,
Որ կը հասնէր վարժարանէն Անգլուհեաց,
Երեկոցեան մաղթանք՝ մ'ուղղեալ Տիրամօր,
Երգեհոնին դաշն վանգիւնով խառնուած:

Կը բարձրանա՛ր, կը տարածուէ՛ր այդ նըւազ .
Որ ամեն օր, վերջալոյսին կը թռչի
Մատաղատի աղջիկներու անապակ
Շըրթունքներէն՝ հըրեշտակաց առաջի .
Անմե՛ղ հոգիք, որք անգիտակ՝ կըսփոխեն
Մեռելոց սուգն իրենց քաղցրիկ երգերով,
Եւ իրենք ալ այդ մանկական հասակէն
Կ'ուսնին տեսնել կեանքը՝ մահուան վըհին քով:

Հոն մընացինք, մինչ դադրեցան մեղեդիք,
Եւ մարեցան ձայներն անոյշ էակաց,
Մինչ մութն իջաւ գերեզմանաց բոլորտիք,
Պատեց սարերն, և հովիտներ լըռակաց:
Թըզենեաց տակ՝ ընկողմանած, ցընորուն,
Մոռցեր էինք զաշխարհ, մարդիկ, ամէն բան,
Երազելով օթեւանն ուր ամենուն
Սահմանուած է հանգչիլ վաղ կամ անազան:

Դարձանք ի վանս, ուր վարդապետ, ուխտաւոր,
«Եկեսցէ»ի կեցած էին հաւատով,
Սուրբ Նիկողեայ կամարին տակ դարաւոր,
Բնութեան վայրագ դոռումներէն անլորդով .
— Զի կը դռար ծովն ամէհի, փրփրալից,
Պարիսպներուն դէմ բաղխելով՝ հովին հետ,
Եւ ուղելով կարծես այն հեշտ աղօթից
Ձայներն ընել իր անդունդին մէջ անհետ:

Այդ տըրամառիթ այցէն ի վեր, երբ տեսնեմ,
Աղմըկայոյզ ոտտանին մէջ, աստանօր,
Մեռելատանք պերճ թաղերու դէմ առ դէմ,
Ոյց մօտ պարեն, սուրան, խընդան, ամեն օր .
Երբ գինարբուաց շըսինդն ողբոց հետ խառնի .
Ո՛հ, կը փնտռեմ այն վայրն ուր դէթ մի բոպէ
Մահն հեշտալի երեւցաւ: Ու երանի՛
Տամ մեռելոց որք կը հանգչին ի Յոպպէ:

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԹՎԱՆ ԹԱԻԻԿԱՆԻԾ

Բ

Թուրկէնէֆ, Պալլաքի նման, իրեն նպատակ ընտրեց իր երկրին մարդկային կատակերգութիւնը գրել: Այս լայնածաւալ գործին մէջ, Ֆրանսայի հռչակաւոր վիպասանին համբերութիւնն, ամբողջութեան կապակցութիւնն և մեթոտը չ'դժբաւ, բայց աւելի սիրտ, աւելի հաւատք, և ոճին ձիրքը, Թափանցանց պերճախօսութիւնն՝ որ առաջնայն քով կը պակսէր: Եթէ ճշմարիտ է որ, ի Ֆրանսա ոչ մէկ պատմագիր պիտի կրնայ սակից առջի սերունդեան կեանքը գծել՝ առանց մէկ քանի անգամ կարդալու Պալլաքը, ի Ռուսիա այդ բանն աւելի ճշմարիտ է Թուրկէնէֆի համար: Ռուսական երկրին մէջ, ինչպէս ըսինք, ժամանակակից պատմութիւնը համր էր. երբ ասպագայ պատմագիրը ուզէն նիքոլա կայսեր և Ալեքսանդր Բ. ի իշխանութեան առաջին տարիներուն Ռուսիան վերստին ապրեցնել իրենց գրչին տակ, վչատութեամբ պիտի կասին դրական պաշտօնագրերու գառարկութեան և լուծեան առջեւ. բայց վիտայ մը պիտի օգնէ իրենց ի հանդէս բերելու մեռեալները, այն հեղինակն որ կրցաւ որոշել այդ փոխանցութեան ժամանակամիջոցի նորարժարձ գաղափարներուն հոսանքները, վերացեալ տիպարներու մէջ մարմնաւորել իր ժամանակակիցներուն ամէնէն յաճախաբէս մտաւորական փիճակները: 1850 և 1860ի մէջտեղ, Ռուսիա առ խնրափափ կ'ընթանայ, խոնջ և մտառանջ, գիշերուան վերջին ժամերուն մոլորած ուղեւորի մը պէս. հորիզոնին վրայ, արշալուսի տմոյն ցոլքեր, ճամբու ծայրեր, լեռանց կատարներու չրճագիծներ՝ կիսովին ընդնշմարեալ. ամենուրեք՝ այդ տարտամ ժամերուն չփոթութիւնն, արշալուսին սպա-

սումը, ոմանց անխորհուրդ հապճեպն, այլոց յողնութիւնն և երկիւղը: Լաւ աչքեր պէտք էր ունենալ, այդ յառաջախաղաց ամբողջին մէջ տեսնելու և գծագրելու համար գէմքերն որ ստուերէն վեր կը բարձրանային, անոնք որք սիրայօժար կը նահանջէին խաւարին մէջ և զորս լոյսն այլ եւս չպիտի գտնէր: Թուրկէնէֆ անոնցմէ շատերն ըմբռնեց. արագօրէն աչքէ անցունենք հաւաքածոյն, թղթատելով այդ ժամանակ գրուած վէպերը:

Առաջնայն մէջ, Ռուսիա, հեղինակը կ'ուսումնասիրէ ընտելութիւն մը, խառնուածք մը, որ ամէն ժամանակներու և ամէն երկրներու յատուկ է, այլ որ կարծես իր նախասիրական կլիմայն գտած է ի Ռուսիա: Այդ Ռուսիոյն, պատմութեան դիւցազնը, պերճախօս խեղճ մըն է, խօսելու մէջ ճարտար գործի մէջ անկարող. կը գինովնայ և ուրիշները կը գինովցունէ իր չաղակրատութեամբ, կեանքին մէջ կը գահավիժի՝ վեհանձն և լուսայեղց գաղափարներու հեղեղի մը պէս: Աշխարհիս լաւագոյն սկզբունքներով, առանց ուրիշ մոլորութիւն մը ունենալու՝ բայց եթէ միամիտ սնափառութիւն մը, վեհանձն մարդու մը անարժան գործեր կը կատարէ. լրբենի անտառի մը կը կարծես զինքն, երբ կը տեսնես որ իր խաբած մարդոց կռնակէն կ'աղբի, մանկամարդ աղջիկ մը կը հրապուրէ, հակառակորդի մը նախատինքը կուլ կուտայ. և սակայն, ամէնէն առաջ խաբուեղն ինքն է. իր հոգւոյն խորը չափազանց պարկեշտ է ու չկրնար մինչեւ վերջն օգտուիլ ներկայացած առիթներէն. չարին կամ բարւոյն դէմ անգոր ու տկար, անդադար կ'ընայ պարապութեան և թշուառութեան մէջ, ծերացած ատենը կը ճանչնայ իր անդարմանելի անկարողութիւնը. թշուառ վախճան մը կ'ունենայ:

Վէպին առաջին յիսուն էջերը՝ ցուցադրութեան հրաշակերտ մ'են. հեղինակը կը մտցնէ զմեզ գաւառական պղտիկ ընկերութեան մը մէջ, արագօրէն կը նշանակէ իւրաքանչիւր անձի տեղն և բնաւորութիւնը. յանկարծ անկալելալ Մեսիան կը հասնի այդ անգոյն միջավայրին մէջ և հոն կը տեղաւորուի իբր աշխարհակալ. ամէն բան կը տփգունի իր պերճախօսութեան

Թուրկէնէֆի գործոց այս ուսումնասիրութիւնը քաղուած է Վեկիւէ գերակոմսին օրուական Վեգէն, զոր կը յանձնարարենք մեր ուսումնասիր երիտասարդաց:

հրանչոյլ ցայտերուն քով. միայն, ծերունի խածան սկեսարիկեան մը անոր բերնին չափը կուտայ և կը ներկայացնէ կենաց գռեհիկ իրականութիւնն, որ յաւիտենապէս կը սլայքարի ընդդէմ խոշական խանդավառութեան: Կամաց կամաց, պատրանքը կը փարատի, գործնական մարդիկն իրենց վստահութիւնը կը վերցնեն երազատեան, հրապուրուած երխտասարդները ժամանակին կը քաշուին կ'երթան: Այդ բոլոր խոնարհ և աննշան մարդիկ համբերութեամբ իրենց կեանքը կը շինեն հոգին փակած և վերջ ի վերջ կ'ունենան լաւ եկամուտներ, լաւ կիներ, լաւ բարեկամներ, մինչդեռ անառակ զաւակը, հակառակ իր մտաւորական բոլոր գերազանցութեան, անկումէ անկում կը գլորի: Գռեհիկը յաղթած է խոշալին: Այս սկզբնաւորութեամբ, վիպասանը մատնանիլ կ'ընէր ռուսական մոքին մեծ թերութիւններէն մին և օգտակար դաս մը կուտար իր հայրենակիցներուն. անոնց կ'ըսէր թէ մեծ վայելուչ ըզձանքները չեն բաւեր, թէ պէտք է անոնց միացնել գործնական ոգի, ջանադրութիւն, անձին կառավարութիւն:

Ռեպէի մէջ, որ բարոյական և իմաստասիրական ուսումնասիրութիւն մըն էր, հեղինակը գաղափարներ յուզած և մըտքերն հետաքրքրած էր: Կը հարցուէր թէ նոյնչափ ճարտար պիտի ըլլա՞ր զգացումներ պարզելու, սրտերն յուզելու: Տերանց Բոյնը իր սլատասխանն եղաւ. իմ կարծեօք, իր փառքին լաւագոյն արտօնն եղաւ այս: Այդ վէպ անթերի չէ, ցուցադրութիւնը նուազ աշխոյժ է քան առաջնոյն մէջ. հեղինակը կ'երկարաբանէ իր անձերուն ազգարանութեանը վրայ, չահեկանութիւնը շատ ուշ կուգայ. բայց անդամ մը որ գործողութիւնը կ'սկսի, կուտարեալ արուեստով յառաջ կը տարուի:

Տէրանց բոյնը գաւառական այն հին տուններէն մին է ուր սերունդներն իրարու յաջորդած են: Այդ միջավայրին մէջ կը մեծնայ մանկամարդ աղջիկ մը, որ ետքէն նախատիպը պիտի ըլլայ ռուսական վիպին բոլոր դիւցազնուհիներուն. պարզ ու պարկեշտ հոգի մըն է այն, առանց արտաքին փայլի, առանց մտաւորական մտանաւոր ձիրքերու, բայց թափանցող չորհրդով և երկաթեայ կամքով օժտեալ,

այն կամքով զոր թուրկէնէթ կը զլանայ այրերուն, զոր իրր ընդհանուր յատկանիշ մը կուտայ իր երեւակայած բոլոր աղջիկներուն, և որ կը մղէ զանոնք ամէնէն այլազան ծայրայեղութեանց, բազմին բերած պատահարներուն համաձայն: Լիզքոսն տարեկան է, անզգայ միացած է գեղադէմ սաշտօնակալի մը հրապոյրներուն որուն համար հոգի կուտայ իր մայրը. սակայն, վերջ ի վերջոյ ձանձրացած, իր խօսքը տալու վրայ է, երբ երեւան կուգայ հեռաւոր ազգական մը, Լավրէձքի: Սա ամուսնացած է, այլ երկար առեւնէ ի վեր բաժնուած անարժան կնոջ մը, որ արկածներու ետեւէ կը պտտի Եւրոպայի ջերմուկի քաղաքներուն մէջ: Վէպի դիւցազնի մը հանգամանքները չունի, խաղաղ մարդ մըն է, բարի և թշուառ, տարիքով եւ մտքով լուրջ: Այդ բոլոր մարդիկը կ'ապրին, իրական կեանքի մէջ տեսնուած են: Խորհրդաւոր կապ մը իրարու կը միացնէ Լիզը և Լավրէձքին. այն վայրկենին ուր այս վերջինն աւելի փորձառու, սոսկմամբ կ'ըմբռնէ անունն զոր պէտք է տալ իրենց փոխադարձ զգացման, լրագրի յօդուած մը իրեն կ'իմացնէ իր կնոջը մահը. ազատ է հիմակ, և նոյն իրիկունն իսկ, հինաւուրց տանը պարտիզին մէջ, երկու սըրտերուն խոստովանանքը կը թռի, որպէս հասուն պտուղ մը որ կ'իյնայ. տեսարանը գրգանոյ է, աշխարհ բնական և աշխարհի քիչ սովորական: Երկու սիրահարներուն այդ երջանկութիւնը ժամ մը կը տեւէ. լուրը սխալ էր, յաջորդ օրը Լավրէձքի կիներ երեւան կուգայ յանկարծ:

Կը գուշակէք անշուշտ այս կացութեան յառաջ բերած հակադարձ զգացումները: Ինչ որ չէք կրնար գուշակել, այն նորութիւնն է որով վիպասանն երկու բացարձակապէս պարկեշտ հոգիներ կը վարէ այդ վտանդին մէնէն: Երկուքն ալ իրենց անձին զոհողութիւնը կ'ընեն, մանկամարդ աղջիկն հաստատ կամքով, այրը՝ դառնակիւծ մաքառումներով: Եւ կը յուսաք որ խափանարար և անարդ կիներ մէջտեղէն վերցուի ամէնէն անզգայ ընթերցողն անդամ կը պաղատի հեղինակին որ մեռցնէ զայն: Աւագ, երջանիկ վերջաւորութեանց սիրահարները գոցելու են գիրքը: Տիկին Լավրէձքի չ'մեռնիր, կը շարունակէ ապ-

րիւ, և շատ զուարթութեամբ: Լիզ կեանքէն ուրիշ բան ճանչցած չէ բայց եթէ սիրոյ խոստում մը, մայիսի կարճատեւ գիշերի մը ատուերուն հետ երեւցած եւ անհետացած: Իր վրէժը լուծել չպիտի փափաքի, Աստուծոյ կը նուիրէ իր վիրաւոր սիրտն և մենաստանի մը մէջ կը թաղուի:

Պիտի ըսէք թէ փոքր ազնկանց համար առաքելի պատմութիւն մըն է այս, Տիւկին Գողգէնի վէպերուն պէս: Այս համառօտութեանը մէջ, նիւթն արդարեւ շատ հինաւուրց կերպարանք մը ունի. պէտք է կարգաւ անոր յաջորդաբար սրարդուող տեսարաններն, ըմբռնելու համար թէ ի՞նչ նոր արուեստով, իրականութեան ի՞նչ մտահոգութեամբ, վիպասանը նոր կեանք տուած է իր նիւթին՝ մարդկային ճշմարտութեան լայն հոսանքի մը մէջ: Զգայական անհամութեան հետքն անգամ չի կայ այս կակածալի պատմութեան մէջ, ոչ ալ կրքի յոյզեր. զգուշաւոր և սուրբ վրձինով նկարուած պատկեր մը, զսպուած արտայայտութիւն մը որ հետզհետէ կ'աճի և սիրադ կը ձգի:

Դիրքը կ'աւարտի քանի մը էջ վերջաբանով մը, որ է և պիտի մնայ ռուսական գրականութեան օրինակներէն մին: Ութ տարի անցած է. Լափրէճքի կը վերադառնայ, գարնան առաւօտ մը, տէրանց բոյնը. նոր սերունդ մը կը բնակի հոն, տղաքները զարս հոն թողած էր՝ մանկամարդ կիներ և երիտասարդներ եղած են, իրենց նոր զգացումներով և նոր շահերով: Լափրէճքի, որ հազիւ կը ճանչցուի անոնցմէ, անոնց խաղերուն վրայ կը հասնի. վէպն այսպէս սկսած էր, կարծես անոր ընթերցումը կը վերսկսուի: Լափրէճքի կը նստի նոտարանի մը վրայ, որ ասանօք վայրկեան մը սեղմեց ձեռք մը, որ հիմա համբիշի մը հատիկները կը համրէ մենաստանի մը մէջ. վաղընչուց բոյնին մատող թռչունները չեն կրնար պատասխանել այդ ուրախութեանց խափանարարին հարցման, մոռցած են անյայտացեալ մանկամարդ աղջիկը. իրենք ուրիշ գործեր ունին և կը վերսկսին իրենց գերառութեան խաղը: Մինչդեռ ծերութեան մենութիւնն և վիշտը կ'աւերեն այդ մեռեալ սիրտը, նայն բաւերը դարձեալ կուգան նկարա-

գրել նոյն կենդանի բնութիւնը, նոր աւալայոց նոր և միշտ միեւնոյն ուրախութիւնները: Շորէնի առաքներուն մէջ, ճիշդ այսպէս սկիզբի մեղեդին կը կրկնուի վերջաւորութեանը մէջ:

Բնութեան յաւիտենականութեան և մարդուն զառամութեան միջև եղած մեղամաղձիկ հակադրութիւնն, երբեք այնչափ զգալի կերպիւ ցոյց տրուած չէր երբեք բազմապատկեան աւելի յարմար եղբեր նոյնչափ անազորոյն կերպիւ մեզ չափել տուած չէին ժամանակին անողոք անցքը:

Տէրնայ քայն հաստատեց մատենագրին հաշակը: Այս աշխարհն այնչափ տարօրինակ է որ բանաստեղծն, ինչպէս աշխարհագիրը, ինչպէս կ'ինքն, մարդոց սէրը կը շահի՝ զայնս տառապեցնելով և լացնելով: Լիզ բոլոր մանկամարդ ազնկանց մտաւոր պարն եղաւ. պէտք է մինչեւ Պաշ և Վերգիլէն երթալ՝ գտնելու համար վիպական գործ մը որ նայնչափ գերիշխան ողբեցութիւն գործած ըլլայ սերնդեան մը եւ երկրի մը վրայ: Հեղինակն, իր բնութարարութեանց ուրիշ ռուս մտախիբութեանց մէջ եւս, ամէնէն աւելի ուժ տուած է սոսկի տին, որ ազգային խառնուածքին մէկ կենդանի յատկանիշն է. էրիկ մարդը փորձամիտ է, կիներ հաստատակամ: Կիներն է որ կը մաքաւի իր բաղդին մէջ, ուղածը գիտէ և կ'ընէ: Իր ստեղծած ուղիղ և կըքոտ աղջիկները կարող են ամէն բանի, ի բաց տուեալ դողալու, խաբելու եւ սրտաւելու:

Տէրնայ քայով, Իվան Ալեկսեւիչ իր սրտին ծայրը տուած էր, դուրս թափած էր դադանի աղբիւրն, որ երիտասարդութեան միջոցին սրտին մէջ զսպուած բոլոր արցունքներով ստուարացած, զբանաստեղծը կը տանջէ մինչեւ այն օրն ուր ելք մը կը գտնէ երկի մը մէջ: Վիպասանը վերսկսաւ ռուս մտախիբը ընկերային միջավայրն, և մոտաւորական այն մեծ շարժման մէջ որ յուլեց դիմութիւն 1860ին տունները, նախ քան ճարտարաւոր ազատագրութիւնն, զրեց Հոգեւ և Ոգեբներ: Այդ գիրքը դարադուրս կը կապմէ գաղափարաց պատմութեան մէջ: Թուրկիէն Գիկրցաւ որոշել մոտաւորական նոր վիճակն և հաստատել զայն անմոռանալի տխարի մը մէջ: Այդ այն ոգին էր որ նիւթին զօ-

րութեան և բարոյական աշխարհին մուս-
լութեան հանդէպ վհատած կը թողուր
Ռուսիոյ զարգացեալ երիտասարդութիւնը .
և այդ բանն հարկաւորաբար յառաջ կը
բերէ պարտելոյն կատաղի գիմադրու-
թիւնը, կոյր ճիգն ոչնչացնելու համար
այս տիեզերքն որ կ'ընկճէ և կը շուարե-
ցնէ զինքն: Այդ ուսական հիւանդու-
թիւնը շատ տարբեր է մոտաւորական նը-
մանօրինակ հիւանդութիւններէն որոց-
մով տառապած է մարդկութիւնը: Պա-
զարոֆը, գիւղացւոյ այդ ժպիրհ, դառն
և լրբենի վաւախ, որ ամէն բանի վրայ
կը թքնէ իր կարծ վճիռները մերթ ժողո-
վրդական և մերթ գիտական լեզուով, և
սակայն քաջարի, անարգ դուրծ մը ընելու
անկարող հպարտութեամբ խեղդելով սրը-
տին բնազդները, յանկարծ կը թուած վայ-
րենի մըն որ մեր գէնքերը գողցած է մեզ-
նէ: Առաջին անգամ, կը կարծէք թէ
Եւրոպիոյ յեղափոխականներուն նման են
Ռուսներն ալ. մօտանց գիտեցէք, և պի-
տի տեսնէք վայրի անասնոյն և ընտելաց-
եալ անասնոյն տարբերութիւնը: Եւրոպիոյ
վաթիւրադոյն յեղափոխականները կատա-
ղի շուներ են միայն. ուստի յեղափոխականը
գայլ մըն է. և այսօր յայտնի է թէ գայ-
լին կոտորուածութիւնն աւելի վտանգաւոր է:

Տեսէք վէպին գիւցազներ ինչպէս կը
վարուի երկու մեծ փորձութեանց մէջ
յորս վիպասանը ցոյց կուտայ մեզ զայն,
—սէրն և մահը: Գեղանի և սչրող կին
մը, որ կը ձանձրանայ, որ կը փորձուի
այդ տարօրինակ յաղթանակէն, ինքն իսկ
քիչ մը նման գայլի, Թուրկէնէֆի գիւ-
ցազնուհեաց շատերուն պէս, կ'սկսի խա-
ղալ վայրի անասնոյն հետ. և ոհա սո կը
վիրաւորուի սրտէն, ինք, իտէպի հեգնիչ
ուրացողը, ինքն որ նախ իր սքանչացումն
յայտնելու համար՝ հիւանդանոցի աշկեր-
տի սո աղաղակն ունեցած էր. «Աքանչե-
լի՛ մարմին, խա՛չ որ ի՛նչ լաւ պիտի յար-
մարի անդամազննութեան թանգարանի
մը մէջ»: Պազարոֆ կը զայրանայ այս բզ-
գացման դէմ, որ իր երկու մէթ տոններուն,
քննադատական բացատրութեան և ու-
րացութեան ոչ միայն ենթակայ է. յետոյ,
վշտէն յաղթուած, իր որսին ցանկացող
գայլին պէս կ'ընէ, կասկածանօք կը հե-
ռանայ, նորէն կը մօտենայ, կը գծումի,

լռին և հրաբորբոք. այս դարձուածքնե-
րուն մէջ, ձեռքէն կը փախցնէ նպաստա-
ւոր վայրկեաններն ուսկից ուրիշ մը յա-
ջողութեամբ պիտի օգտուէր, և յան-
կարծ, անդէպ ժամու մը, իր որսին վրայ
կը նետուի անասնական ոտտումով մը.
սչրանոյշ կինը ձեռքէն կը փախչի, և Պա-
զարոֆ կը վերադառնայ գլխիկոր, կու-
տալով իր մահացեալ հպարտութիւնը,
կ'երթայ ինքզինքը կրծել մենութեան
մէջ:—Հապա Պազարոֆի մահը: Ժանտա-
տենդաւորի մը գիւղին ուսումնասիրած
ատեն իր արիւնը թունաւորած է, գիտէ
որ կորսուած է. այդ մտայն, համր, վէս
հոգեվարքը, հոգեվարքն է դարձեալ վայ-
րի անասնոյն որ իր գնատկը կը տանի
թաւուտքին մէջ. Գայլն հահ է այս այն-
պէս ինչպէս Ալֆրէտ սը վինեի նկարա-
դրած և ըմբռնած է իր թախծալից ստո-
յիկութեամբ:

Հեծել լալ, աղաչել, վատութիւն ամէնքն ալ.
Արութեամբ կատարէ ծանրակիր քոյր պաշտօն
եւ ինչ պէս տառապէ ու մեռիւր անթօսուկ:

Բանաստեղծին զգայնութիւնն իր
վրէժը կը լուծէ հայրերուն պատկերներով,
հին սերնդեան այն բարի մարդոց որք
վեհերոտութեամբ կը դիտեն նոր հոսան-
քին եռացումն և կը ջանան դսպել զայն
ամէն կերպ խանդաղատանքով: Թուրկէ-
նէֆ երբեք այնչափ հեռի տարած չէր
ստեղծիչ կարողութիւնը, մանրակրկիտ
գիտողութեան ձիրքը:

Լ. Բ.

Արտօնատէր
Կ. Ս. Իիթիիճնէն

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ